ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը **ՀՀ արդարադատության նախարարություն**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 923-Ա որոշման**
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը **ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը** (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը **Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ)**
5. Գործուղման ժամկետները **2025 թվականի հոկտեմբերի 20-22-ը**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) **հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը**- (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլ*

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

☒ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		**Սրբուհի Գալյան**	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	0	0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	0	0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0	0
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը	0	0

	(դրամ)		
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	0	0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0	0
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	0	0
Այլ ծախսեր			
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*Սպասարկում ՊՊ սրահում*)	0	0
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		0	0

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԷԴԳԱՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆԻ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՍՏՐԱՍԲՈՒՐԳ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Սրբուհի Գալյան, Արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ), 2025 թվականի հոկտեմբերի 20-ից 22-ը:

Հրավիրող կողմը՝ ԵԽ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցել և բացման խոսքով հանդես գալ «Բիզնեսը և մարդու իրավունքները» վերտառությամբ ԵԽ համաժողովին, հանդիպումներ ունենալ ԵԽ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Քննարկված թեմաները՝ Բիզնեսի դերը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, Հայաստանի արդարադատության ոլորտի բարեփոխումները, մասնավորապես՝ դատական և իրավական, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության, քրեակատարողական և պրոբացիայի բնագավառներում արձանագրված հաջողություններն ու ընթացիկ նախաձեռնությունները, սահմանադրական բարեփոխումների օրակարգն ու այս համատեքստում նախարարության կողմից իրականացվող քայլերը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը մասնակցել և բացման խոսքով հանդես է եկել «Բիզնեսը և մարդու իրավունքները» վերտառությամբ ԵԽ համաժողովին:

Նախարարն անդրադարձել է Հայաստանում իրականացվող նախաձեռնություններին՝ ուղղված կորպորատիվ էթիկայի զարգացմանը, խտրականության դեմ պայքարին և մարդու իրավունքների, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությանը, որոնք նպաստում են բիզնեսի կայունությանը և վստահելիության բարձրացմանը, Հայաստանում ընթացող համապարփակ թվային բարեփոխումներին և արհեստական բանականության ներդրմանն ու այս համատեքստում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ապահովմանը:

Ստրասբուրգ այցի ընթացքում Նախարարը հանդիպումներ է ունեցել Եվրոպայի խորհրդի բարձրաստիճան պաշտոնյաների, մասնավորապես՝ ԵԽ գլխավոր քարտուղարի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահի, ԵԽ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ու ԵԽ ժողովրդավարության և մարդկային արժանապատվության գլխավոր տնօրինությունների ղեկավարների հետ:

Հանդիպումների ընթացքում Սրբուհի Գալյանը ԵԽ գործընկերներին ներկայացրել է ՀՀ-ում իրականացված և ընթացքի մեջ գտնվող՝ արդարադատության ոլորտի բարեփոխումները, մասնավորապես՝ դատական և իրավական, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության, քրեակատարողական և

պրոբացիայի բնագավառներում արձանագրված հաջողություններն ու ընթացիկ նախաձեռնությունները:

Արդարադատության նախարարն անդրադարձել է նաև Սահմանադրական բարեփոխումների օրակարգին ու այս համատեքստում նախարարության կողմից իրականացվող քայլերին:

ԵՄ գլխավոր քարտուղար Ալեն Բերսեի հետ Նախարարը քննարկել է սահմանադրական բարեփոխումների ընթացքը, խաղաղության կարևորությունը և դրա ամրապնդման ուղղությամբ կատարվող աշխատանքը, ժողովրդավարական արժեքների պահպանման համատեքստում ապատեղեկատվության, օտարերկրյա ազդեցությունների և հիբրիդային սպառնալիքների դեմ արդյունավետ պայքարի անհրաժեշտությունը, ԵՄ-ի հետ իրականացվող ծրագրերի ընդլայնումը և համագործակցության նոր ուղղությունները:

Նախարարը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Մատիաս Գիյոմարի հետ հանդիպմանը վերահաստատել է Հայաստանի լիակատար հանձնառությունը Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի դրույթներին՝ ընդգծելով Հայաստանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արդյունավետ համագործակցությունը, և վերջինիս ուղենիշային ազդեցությունը Հայաստանի իրավական բարեփոխումների տեսանկյունից: Նա ներկայացրել է ՄԻԵԴ վճիռների կատարման ուղղությամբ Հայաստանի առաջընթացը՝ ընդգծելով օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումները, որոնք նպաստում են մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության մակարդակի բարձրացմանը:

ՄԻԵԴ նախագահը բարձր է գնահատել վերջին տարիներին Հայաստանի ձեռնարկած քայլերը, որի դրական առաջընթացն արձանագրվել է նաև ԵՄ նախարարների կոմիտեի կողմից:

Արդարադատության նախարարը հանդիպում է ունեցել նաև Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության և մարդկային արժանապատվության գլխավոր տնօրեն Մարյա Ռուտանենի հետ:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Հայաստանի առաջընթացը իրավահավասարության ապահովման, խտրականության և ատելության խոսքի դեմ պայքարի ոլորտներում, ինչպես նաև անդրադարձել շարունակական համագործակցության հնարավորություններին: Նախարարը ներկայացրել է նաև Արդարադատության նախարարության կողմից մշակված հայեցակարգը՝ ուղղված ատելության խոսքի համեմատաբար թեթև դրսևորումների դեմ պայքարին՝ հավասարակշռելով նաև արտահայտման ազատության պաշտպանությունը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել երկկողմ արդյունավետ համագործակցությունը մարդու իրավունքների ոլորտում:

Նախարարը ԵՄ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրեն Ջիանլուկա Էսպոզիտոյի հետ քննարկել է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության արդյունավետության ոլորտներում իրականացվող բարեփոխումները, ինչպես նաև իրավական համակարգի հետագա զարգացման հնարավորությունները: Նախարարը ներկայացրել է Արդարադատության

նախարարության օրենսդրական նախաձեռնությունները, այդ թվում՝ դատավորների էթիկայի և կարգապահության հարցերով խորհրդատվական հանձնաժողովի ձևավորման, դատավորների գնահատման գործընթացի բարեփոխումների և գերակա հանրային շահի ոլորտում հստակ կարգավորումների ներդրման ուղղությամբ: Քննարկվել են նաև ապատեղեկատվության դեմ պայքարում համատեղ նախաձեռնությունների իրականացման հնարավորությունները:

Հանդիպման ավարտին պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել երկկողմ արդյունավետ համագործակցությունը մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ոլորտներում, ներառյալ նաև ապատեղեկատվության դեմ պայքարի ոլորտում նոր ծրագրերի նախաձեռնումը:

Արդարադատության նախարար

Սրբուհի Գալյան
24.10.2025թ.